

Կանխագիտակ

ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆ



ԿՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



թիվ 10




ՏՊԱԳՐԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՀԱՆՐԱԳԻՏ ՀԱՆՐԱԿԻԴԱԳ HANRAKIDAG
ՀԱՐԱԹԱԿԱՆ مجموعه علوم JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIE

Է. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ || ԹԻԻ 10 || 13 ՄԱՐՏ 1904

ՄԱՆԿԱԿԱՆ

ԱՆՍԵՆ ՕՐԵՐ

ՅԱՐԳԵԼԻ ՈՒՍՈՒՑԶԻՄ՝ ԱԿՈՒԼԻՆԻՆ

Կար ասեն մը երբ մենք ցաւոց անգիտակ,
Ուռոյց, զուարթ, ինչպէս անմեղ հրեշտակ,
Վայելիքին բարմութիւնը մեր կեանքին,
Զոր բնութիւն մեզ իբր ձօներ զանձ անգին:

Մեր ծնողաց հովանոյն տակ սիրազեղ,
— Ի՛նչ անուշ կեանք, ինչ մքնդութիւն տուրք՝ անմեղ —
Կը շնչէինք անամայ երկնի օդն խաղաղ,
Ու խայտալին անվիշտ սրտեր մեր մատաղ:

Բայց մարեցան, անհետացան անվաւեր
Այդ միամիտ տարիներու երազներ,
Թռան անոնք եւ հետեւեցին տարին մեր
Տղայական սրտին երազն ու յոյսեր:

* *

Անմեղ օրեր, դուք որ բարւոյն սիրահար,
Քաղցրիկ յոյզեր ունիք ձեր մէջ անհամար
Ինչո՞ւ այդքան անհետիւք վաղ, տրտմագին
Յիշատակներ բողբոջ միայն ձեր ետին:

ԳՇԵՆԱ

Տ. Յ. ՏԻԻԼԿԵՐԵԱՆ

ՏՐԱՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԱՂՋԿԱՆՑ ՄԱՆԿԱՊԱՐՑԷՋՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ



ՃԱՆՃԸ ԲԱՑԱԽՈՎ ՉԵՆ ԲՈՆԵՐ

(Շարունակութիւն Գրդ Թիւէն)

ՍԻՐՎԱՐԴ, ՄԱԹԻՆՏ

Սիր. — (Խնդալով) Շատ տարօրինակ բան է. ո՞ւրկէ կըցած է անցնիլ:

Մաթ. — Ձեմ կրնար հասկնալ. ես Տիկ. Պիստոսը կը դիտէի, որ մեզի զարհուրելի ակնարկներ կը նետէր ու չտեսայ Շուշանին երթալը:

Սիր. — Պարտէզին դուռնէն գացած չըլլա՞յ:

Մաթ. — Ձեմ կարծեր. տիկ. Պիստոս զայն տեսած կ'ըլլար:

Սիր. — Բայց ո՛չ, նայէ ի՞նչ մօտիկ է:

Մաթ. — Իրա՛ւ անանկ է: Վայրկենապէս ինքզինքը ապա- տած ըլլալու է: Ու հէգ Ալիսին վրայ կ'արգահատիմ որ այդ խու- ցին մէջ փակուած է այն սոսկալի գօտիով որ մարդուն գլուխը կը չարչրկէ ծռած ատեն: Պիտի ջանամ զայն ատկէց ազատել. սպասէ՛ հոս քիչ մը, վայրկեանէ մը կուգամ: (Կը մեկնի):

Սիր. — (Միմակ). Խեղճ Ալիս ու խեղճ Շուշան, որքա՛ն նե- ղացած են այն օրէն ի վեր երբ իրենց մայրիկը իրեն փոխանորդ կարգեց տիկ. Պիստոսը: Դժբախտութիւն մըն է որ մայրս ու մօ- րաքոյրս երկուքնին ալ ճամբորդութեան մէջ են: Մայրիկս ան- կասկած պիտի արգիլէր տիկ. Պիստոսին՝ իմ մօրաքրոջ աղջիկ- ներուն ասանկ խստութեամբ վարուելուն համար: Եթէ մօրաքոյրս ալ գիտնար անոնց վիճակը. առաջուրէն անոր յանձնած չէր ըլ- լար: Եւ ի՛նչ երջանկութիւն երբ մայրս մեզ գտնէ մեր սիրելի Օր. Հայկանոյչին քով: Անիկա ա՛յնքան քաղցրաբարոյ է, ա՛յն- քան համբերող, ա՛յնքան բարի ու ա՛յնքան արդար, որ մարդ չիկրնար անոր հետ ոչ ծոյլ եւ ոչ ալ չար ըլլալ:

ՍԻՐՎԱՐԴ, ՄԱԹԻՆՏ ԵՆ ԱԼԻՍ, ՎԱԽԵԳԱԾ

Մաթ. — Սիրվա՛րդ, օգնէ՛ ինձի որպէս զի կարենամ սա գօ-
տին ու կռնակի երկաթէ տախտակը հանել: Աճապարե՛նք, եթէ
տիկին Պիստոս նորէն գա՛յ: Զպիտի թողու:



Սիր. — Մենք թող չե՛նք տար: Ինձի՛ տուր սա մկրատը որ
կապերը կտրեմ: Պահենք Ալիսը եւ մանաւանդ այս գօտին: Ո՛ւր
դնենք:

Մաթ. — Պատուհանէն դուրս նետենք:

Սիր. — Դարձեալ կը գտնուի: Կեցի՛ր, թափոյկին մէջ կը նե-

տենք, ու աս իրիկուն, պիտի խնդրեմ սպասուհիէս որ զայն խոհանոցին կրակը նետէ :

Ալիս. — Օ՛հ, շնորհակալ եմ, իմ սիրելի զարմուհիներս: Ի՞նչ երջանկութիւն, ազատուիլ այս գօտիէն որ կը սեղմէ, որ կը ցաւցընէ կռնակդ, ստամոքսդ, ծնօտդ: Բայց հատ մըն ալ տիկ. Պիստոսի տունը կայ. եթէ կարենայիք զայն ալ ոչնչացնել:

Մաք. — Ես պիտի առնեմ զայն: (Դուրս ելել կ'ուզէ. սիկին Պիստոսը կը տեսնէ, որ Շուշանը կը փնտռէ: Անմիջապէս ներս կը մտնէ): « Տիկին Պիստոսը կուգայ կոր », կ'ըսէ կիսաձայն: Ալիս խեղդուկ նիչ մը կ'արձակէ: Սիրվարդ զանկա վայրկեանբար պարտեգիմ դուռնէն դուրս կը հանէ):

Սիր. — (Յած ձայնով). Ջանա՛ Շուշանը աղէկ պահուըտեցնել:

ՍԻՐՎԱՐԴ, ՄԱԹԻՆՏ ԵՆ ՏԻԿԻՆ ՊԻՍՏՈՍ

Տիկ. Պիս. — (Շատ նեղացած կ'երեւայ). թիկնաթոռի մը մեջ կը բազմի մեծվայելչութեամբ ու նոռոմ երեւոյթ մը կ'առնէ). — Իրա՛ւ խելքէ մօքէ չանցնելիք բան էր. զիս այսպէս վազցնել համարձակիլ, ապահ տաք օդի ատեն: Կեանքիս մէջ չա՛տ մը ազաք տեսած էի՝ որոնցմէ ո՛ր է մէկը երբեք չէր համարձակած ինծի այս տեսակ բաներ ընելու: (Սիրվարդին եւ Մաքիսին դառնալով): Եւ դո՛ւք, Օրիորդներ՛, որ ձեր զարմուհիին լրբութեանը կը մասնակցիք, դո՛ւք ալ պիտի պատժուիք անոր պէս: Ասիկա պիտի պահանջեմ Օր. Հայկանոյչէն:

Սիր. — (Հանդարտօրէն). Եւ որովհետեւ մենք յանցաւոր չենք, տիկին, չեմ վախնար պատժէն որով կը սպառնաք մեզի:

Տիկ. Պիս. — Յանցաւոր չէք մի՛, յանցաւոր չէ՛ք, երբ կ'օգնէք ձեր մօրաքրոջը աղջիկին՝ իմ ձեռքէս կորդելու համար:

Սիր. — Ես կ'ուզեմ խօսիլ գօտիին վրայ որ կռնակին մէջ գացող տախտակ մը ունի, եւ երկաթէ երկփանի մը՝ կզակին տակ, որ կը տառապեցնէ մարդն եւ որ իմ զարմուհիներուս համար վայրագ բան մըն է: Ու ինտո՞ր կ'ուզէք որ աշխատին այդ գործիքով:

Տիկ. Պիս. — Քանի որ դուք այսքանը կ'իմացնէք, օրիորդ, ուրեմն դուք Շուշանը տեսած էք հիմա, հետը խօսած էք, գիտէք ուր ըլլալը, կ'օգնէք անոր՝ պահուըտելու համար ու յանցաւոր էք զուք ալ իրեն պէս:

Սիր. — Նայինք ի՞նչ պիտի որոշէ օր. Հայկանոյչ:

ԱՆՏԻՆՆԵՐԸ ԵՆ ՕՐ. ՀԱՅԿԱՆՈՅՇ

Տիկ. Պիս. — (Դեպ ի օր. Հայկանոյչին կ'ուղղուի), Սիրելի օրիորդս, առաջուց ձեզի կուգամ իմացնել որ օրինակելի պատիժ

մը կը պահանջեմ այս օրիորդներուն համար, մանաւանդ նա լիբր Սիրվարդին:

Օր. Հայ. — Ի՞նչ ըրած են իմ խեղճ աղջիկներս՝ այս անտի-
ճան ձեր ցատումը գրգռելու համար, տիկին:

Տիկ. Պիս. — (Բարկութեամբ). Շուշանը իրեն արժանի պա-
տիժէն ազատեցին. անոր օգնեցին որ փախչի: Մածուկ տեղ մը
կը պահեն. ինծի ո՛րն աստիճան վազցնել տուին որ, քրտինքնե-
րու մէջ կը լողամ կոր, ու վերջացնելու համար, ինծի լպիրշ խօս-
քեր կը պատասխանեն ու զիս կը բարկացնեն:

Օր. Հայ. — Ներողութիւն, տիկին, երբ կասկած մը յայտնեմ
այդ մասին, իմ աշակերտուհիներս միշտ քաղաքավար են՝ Հաճե-
ցէք նստիլ, տիկին ու քիչ մը յոգնութիւն առնել:

Տիկ. Պիս. (Զաւմացած). Ինչո՞ւ համար:

Օր. Հայ. — Հանգչելու համար. տիկին: Տաքցած ըլլալու էք
այդքան հապտապ վազելնուդ համար, հանգստացէք, որպէս զի
լաւ վիճակ մը ստանաք: Երբոր ձեր յուզմունքը խաղաղի, տի-
կին, կրնաք ինծի աղէկ մը բացատրել ձեր գանգատին պատճառ-
ները:

Տիկ. Պիս. — Ես կը գանգատիմ անոնց դէմ անոր համար որ
անոնք Շուշանը պահեցին: Բայց կ'ուզեմ որ ձեռքս ունենամ զայն,
կը պահանջեմ որ ինծի վերադարձնեն:

Օր. Հայ. — Ձեր զայրացած վիճակին մէջ զանիկա ձեզի
յանձնելը, տիկին, վշտառիթ պիտի ըլլայ թերեւս ձեզի համար
ինչպէս նաեւ անոր: Իմացայ որ կատարելապէս չեմ գիտեր ուր
ըլլալը:

Սիր. — Մենք ալ, տիկին, ո՛չ Մաթիլտը, ոչ ես չենք գիտեր
թէ ի՞նչ եղած է:

Տիկ. Պիս. — Ինծի չէ՛ք կրնար հաւտացնել, օրիորդներ, ու
ես ձեր վարմունքը շատ ծիծաղելի կը գտնեմ:

ՕՐ. ՀԱՅԿԱՆՈՅԵ, ՍԻՐՎԱՐԴ, ՄԱԹԻԼՏ

Օր. Հայ. — Դժբախտութիւն մըն է ձեր մօրաքրոջը աղջիկ-
ներուն Տիկ. Պիստոսի ուղղութեան տակ գտնուելնին. բայց ան-
շուշտ պիտի ազատին անոր հնազանդելէ. որովհետեւ վերջապէս
Տիկ. Պիստոս իրենց մօրը վարմուհին է. որուն աղաչած է իր
զաւկըներուն հոգ տանիլ՝ իր ճամբորդութեան միջոցին, եւ աւելի
աղէկ է որ իրենց ծնողքին կամքին հնազանդին: Ո՞ւր են խեղճ
պզտիկները:

Սիր. — Բնա՛ւ չեմ գիտեր, օրիորդ, ա՛ս է զուտ ճշմարտո-
թիւնը:

Օր. Հայ. — Համմէ՞, ես ձեզի թողուցի որ Շուշանը պահէ՞ եթէ ուզէք:

Սիր. — Մենք զինքը սեղանին տակ պահեցինք. անիկա անխոհեմութիւնը ունեցաւ Տիկ. Պիստոսի առջեւ խօսիլ. տիկ. Պիստոս սեղանին տակ նայեցաւ ու չգտաւ Շուշանը, կարծեց թէ Մաթիլտ ու ես զայն պահած ենք. եւ սակայն Շուշան ինքզինքը ազատեր է մեր չտեսած պահուն եւ չենք գիտեր թէ ո՞ւր փախած է:

Մաթ. — Կը կարծեմ որ չորս ոտքով պարտեցին դուռնէն դուրս ելած ըլլայ. չեմ կրնար ուրիշ միջոց մը գտնել՝ իր անհետացումը բացատրելու. իսկ Ալիսը, տիկ. Պիստոսի՝ Շուշանը փնտռած միջոցին ազատեցի, ու գաղտուկ մը պարտեցէն փախցուցի այն վայրկենին երբ տիկ. Պիստոս հոս կը մտնէր եւ կ'ուզէր մեզ ստիպել որ իրենց յանձնենք Շուշանը:

Օր. Հայկ. — Զարմանալի է անոր անհետացումը, իրապէս անհանգիստ եմ ատոր համար:

Սիր. — Սիրելի՛ օրիորդ, կ'ուզէ՞ք որ երթանք զանոնք երկուքն ալ փնտռենք:

Օր. Հայ. — Այո՛, սիրելի պատիկներս. գացէք ու ջանացէք զանոնք բերել:

Թարգմ. Վ. ԳԱՐԱԳԱՆԵԱՆ
(Շարունակելի)

ՏԻԿ. ՍԵԿԻՒՐ ԿՈՐՍՈՒՀԻ

Բարոյական Խրատներ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ՓՈՔՐԻԿ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ

6. — ձեմարիս յաջողութիւնը

Ամէն ոք կ'ուզէ որ կեանքին մէջ յաջողութիւն ունենայ: Բայց ի՞նչ է յաջողութիւնը: Երջողութիւն, իր պարզ նշանակութեան մէջ, ստացուածքի ճիշտ հաւաքումն ըլլալ կը կարծուի, սակայն ճշմարիտ յաջողութիւնը ոսկիին և ստացուածքին շատութեան հետ չբաղդատուիր: Ամէն երջանիկ, օգտալից կեանք՝ ճշմարտապէս յաջողած կեանք մըն է: Հարստութիւնը օգտակար է միայն երբ կարող կ'ըլլանք անով օգնել համեստօրէն անոնց ու

րոնք մեզ կը կարօտին եւ երջանիկ ընել այն կեանքերը որոնց
յաջողութեան չափը մերինէն վար է: Հարստութիւնը դրական
ստացուածք մըն է աշխարհի վրայ եւ իր հաւաքումը մերժելի չէ:
Բայց ճշմարիտ յաջողութիւն փնտդող տղայ մը հարստութենէն
նախադաս կը համարէ բարեգործութիւնը: Ծշմարտապէս յաջողած
է այն տղան որ գթոս սիրտ մը կը կրէ, բարերար եւ օգնութիւն
սփռող ձեռքեր ունի, ի սրտէ կուտայ աղքատներուն իր ստաց-
ուածքէն եւ իր բոլոր ընկերներուն հետ սիրով կը վարուի: Պզտիկ
բարեկամներս, աշխարհի վրայ սոսկ հարստութիւն դիզելու մի
աշխատիք, այլ բարեգործ ըլլալով ձեր ունեցած հարստութիւնը
— քիչ կամ շատ — Լստուծոյ կամքին համաձայն ծախսել սոր-
վեցէք: Աշխարհի հարստութիւնն ու փառքը մինչեւ գերեզման կը
տուեն, բայց մեր բարեգործութիւններն են որ մեզի հետ մինչեւ
երկնաւորին գահին պիտի մօտենան: Ահա՛ երջանիկ եւ ճշմարիտ
յաջողութիւնը որուն շատեր կը փափաքին բայց քիչեր կը
հասնին:



Ամենաբարձր ծառերը ջրունին ակռաներէն կը վախնան:

— Ծանցցիր պարտականութիւնդ եւ ահա վստահաբար կա-
տարած պիտի ըլլաս զայն:

— Աշխարհի յաջողագոյն մարդն է այն որ ուրիշի մը հան-
դէպ ունեցած պարտականութիւններուն մէջ թերի չգտնուիր:

— Հարստութիւնն ու գիտութիւնը յաջողութիւններ նկատ-
ուելու չեն, այլ անոր տանող ճամբաներ:

— Յաջողութիւնը թանկագին ադամանդ մըն է թաղուած
ահագին քարի մը տակ որ ջանք կը կոչուի. վերցուր քարը եւ
ահա ադամանդը իր փայլով պիտի վայելես:

Չ. — Օգտակար ըլլալ

Շատ դպրոցական տղաքներ ենթակայ են խորհելու թէ քանի
որ գիշեր ցերեկ գրքերով կ'զբաղին, հետեւաբար իրենցմէ ուրիշ
պարտականութիւններ պահանջել սխալ է: Սակայն դիւրին է
գուշակել թէ այսպէս խորհող տղայ մը իր դասերուն մէջ անկա-
րելի է որ յաջողակ ըլլայ: Դիւրին գործեր կը փնտռէ ան, պար-
տականութիւններէ փախչի կ'ուզէ. անտես ընելով իր ծնողաց
տաժանագին աշխատութիւնները:

Մարտիկ գիշերային վարժարանէն գիւղ վերադարձած էր, ամառնային արձակուրդը անցնելու համար, երկար ամիսներու տաժանագին աշխատութենէ մը վերջ, շատ սիրելի կը թուէր իրեն հայրենի գիւղը, իր հայրը, Սարգիս աղա, երկրագործ մըն էր, ձիեր, կովեր, եղներ և ոչխարներ ունէր, Մարտիկ դպրոցին մէջ շատ մը գիտութիւններ, լեզուներ և կրթութիւն սովորած էր, Լաւ գիտէր թէ իր գործը միայն կարգալ և գրել չէր, այլ թէ իր ծնողաց և թէ իր նմաններուն օգնել, Նա ամէն առտու իր հօր հետ արտը կ'երթար գործաւորներուն վրայ հսկելու, չի մոռնալով նաեւ իր հետ առնել կարգ մը գեղեցիկ գրքեր զորս այնքան կը սիրէր կարդալ: Հոն կ'աշխատէր իր հօր հետ մինչեւ կէը օրուան սաստիկ տաքը, յետոյ ծառի մը տակ նստած կը կարդար: Եւ երբ իրիկունը տուն կը դառնար զով ջրով լըռացուելէ և հանդերձեղէնները փոխելէ վերջ քանի մը աղքատ հիւանդներու այցելութիւն կուտար:

Սիրելի տղաքներ, Մարտիկի օրինակին հետեւեցէք, եթէ կուզէք որ բարի, ազնիւ և օգտակար տղաքներ ըլլաք: Միայն դպրոցի գրքերը կարդալով մի բաւականանաք, այլոց օգնութիւն ընել սորվեցէք: Օգնեցէք ձեր ծնողաց, օգնեցէք ձեր նմաններուն որ Աստուած ալ ձեզ օգնէ:

×


Ան որ կը սիրէ արծաթը, չափաի կշտանայ արծաթով:

— Հարուստներ առանց գիտութեան կը նմանին կերակուրներու որոնք աղ չունին:

— Եսասէրը չի կրնար վայելել նոյն իսկ իր ուրիշի հետ ունեցած բարեկամութիւնը:

— Ան որ ուրիշին չօգնէր, կը նմանի ծառի մը որ պարտիզպանին ամէն հոգածութիւնները վայելելէ վերջ պտուղ չի տար:

— Այլոց դէմքերը մեր հայելիներն են. եթէ մենք ժպտինք անոնց, անոնք ալ մեզ կը ժպտին. եթէ մենք չախորժինք անոնց, անոնք ալ մեզ կը ժպտին. եթէ մենք չախորժինք անոնց, անոնք ալ մեզ կը ժպտին. եթէ մենք չախորժինք անոնց, անոնք ալ մեզ կը ժպտին:



Acide

լով: Ահաքս ու Ուդիսես իր մարմինը ազատեցին Տրոյապոլիսներու ձեռքէն և անոր զէնքերը բաժնելու համար վէճ մը ծագեցաւ մէջերնին: Ուդիսես ի վերջոյ յաղթական մնաց և տիրացաւ անոնց: Աքիլլէսի աճիւնները Միկէի հրուանդանին վրայ գետեղուեցան և ի պատիւ իրեն տաճարներ կառուցուեցան:

Acide, Թթու. — Հնդհանրական անունն է ջրածին պարունակող կարգ մը բաղադրեալ մարմիններու որոնք լուսագեղի կապոյտ գոյնը կարմիրի կը փոխեն և աղեր կը կազմեն իրենց ջրածինին հիւլէներուն տեղ մետաղ մը անցնելովը: — Կարգ մը մարմիններ քայտախ թթու համն ունին եւ լուսագեղի կապոյտ գոյնը (teinture bleue de tournesol) կարմիրի կը փոխեն, ասոնց կ'ըսեն աղկազմ. պատշաճ համեմատութեամբ մը թթուի եւ աղկազմի միաւորութենէն յառաջ կուգան աղերը՝ որոնք բնաւ ազդեցութիւն մը չունին լուսագեղի գոյնին վրայ: Թթու, աղկազմ և աղ երեք կարգ մարմիններ են իրարմէ կախում ունեցող, զորս կարելի չէ անջատորէն սահմանել: Սակայն այս մարմիններուն սահմանը զորն հիմնած են անոնց լուսագեղի գոյնին վրայ ըրած փոփոխութեան վրայ՝ արուեստական եւ շատ ալ անկատար է. օրինակի համար ածխական կազը կը կարմրցնէ այդ գոյնը եւ նատրիոնը կապոյտի կը վերածէ դայն. այս երկու մարմիններու միաւորումէն յառաջ եկած նատրիոնի բնածխատը դարձեալ կը կապոյտցնէ դայն եւ սակայն աղերու դասակարգին մէջ կ'ընդունուի: Այս պատճառաւ վերի դասակարգութիւնը կատարելու համար բնաւոյժները մարմիններուն ներքին կազմութեան կը դիմեն: Հիները աղ անունը կուտային բոլոր ծովու աղի նմանող մարմիններուն: Առաջին անգամ, 1744ին, Ռուէլ կարծիք յայտնեց թէ աղերը կազմուած են « Հանքային կամ բուսական ո եւ է թթուի մը միաւորութեամբը, ցնդական կամ ոչ ցնդական կալաքարերու, ծծող հողերու կամ մետաղական մարմնոյ մը հետ »: Յետոյ Լավուազիէ այրումի վրայ կատարած փորձերուն մէջ հաստատեց լուսագեղի գոյնը կարմրցնող կարգ մը մարմիններու թթուածին պարունակելը, նոյնպէս տեսաւ թէ մետաղական կիրի մէջ ալ թթուածին կայ. ասկէ հետեւցուց թէ քիմիական աղերը կազմուած են թթուածին պարունակող թթուի մը և մետաղական ոքսիտի մը բաղակցութեամբ: Սակայն Տալի ապացուց թէ այն ատենը « Թթուածեալ քլորաջրատական թթու » ըսուած նիւթը պարզ մարմին մըն է՝ քլորը, և անոր կազմած « Կալիոնի քլորաջրատ » անուն աղը բաղկացած է քլորէ և կալիէ, առանց քրուածինի. ասոր համար թթուներու նոր դասակարգ մը կազմեցին և ջրածնաքրու անունը տուին, յիշեցնելու համար թէ յառաջ եկած են մարմինի մը ջրածինի հետ բաղակցութենէն: Տալի ալ աւելի յառաջ գնաց և ընդունեց թէ միմիայն ջրածնաթթուներ կան և թթու մը՝ աղ կազմելու յատկութիւնը պարտական է իր պարունակած ջրածինին և ոչ թէ թթուածինին: Ծծմբական թթուին բնաւուծական տա-

Acide

րազը գրեց Մթ¹Ջ² և կալիոնինը ԿլթՋ և այս երկու մարմիններու միաւորումէն յառաջ եկած հակազդեցութիւնը բացատրեց սա՝ հաւասարութեամբ.

$$\text{Մթ}^1\text{Ջ}^2 + 2\text{ԿլթՋ} = \text{Մթ}^1\text{Կլ}^2 + 2\text{Ջ}^0$$

Ջրատեալ ծծմբ. Թթու Կալիոն Կալիոնի ծծմբատ Զուր

Մինչդեռ Ղափուազիէ կը գրէր

$$\text{Մթ}^5\text{Ջ}^2\text{թ} + \text{Կլ}^2\text{թ}^2\text{Ջ}^0 = \text{Մթ}^5\text{Կլ}^2\text{թ} + 2\text{Ջ}^0$$

Ջրատեալ ծծմբ. Թթու Կալիոն Կալիի ծծմբատ Զուր

Այսինքն, մինչդեռ Ղափուազիէ կը կարծէր թէ ծծմբական թթունին ջուրին տեղն է որ բռնած է որ Կալիի ոքսիտը Կլ²թ, կազմելու համար նոր մարմինը՝ կալիի ծծմբատը, Տափի կը նկատէր թէ պարզապէս ջրածինին տեղն է որ կալին անցած է: Այսօր Տափի տեսութիւնը ընդունուած և իբր ճիշդ ճանչցուած է: Հիմնուելով մարմիններուն ելեկտրականութեան միջոցաւ տարբազադրելու կերպին՝ կրնանք սահմանել թէ թթուները կազմուած են ելեկտրա-ժխտական տարրի կամ արմատականի մը միաւորութեամբ ջրածնի հետ՝ որ ելեկտրա-դրական տարրն է. այսպէս քլորաջրածնական, ծծմբական, լուսածնական թթուները՝ որոնց տարազներն են ՋԹ, Մթ¹Ջ², Լթ¹Ջ⁵, կազմուած կ'ըլլան ջրածինի բազակցութեամբ Մ, Մթ¹, Լթ¹ ելեկտրա-ժխտական տարրերուն հետ: — Թթուները էապէս ջրածնի բազակցութիւններ ըլլալով, կրնան անոր տեղ ուրիշ ելեկտրա-դրական տարր մը՝ մետաղ մը՝ փոխանակել. յառաջ եկած մարմինին աղ կ'ըսեն, վերը յիշուած երեք թթուներուն կը համապատասխանեն կալիի հետեւեալ աղերը

$$\text{ԿլՄ}, \text{Մթ}^1\text{Կլ}^2, \text{Լթ}^1\text{Կլ}^3$$

Այս յատկութեան կրնանք աւելցնել նաեւ թթուածին պարունակող թթուներու քլորուկ մը յառաջ բերելու կարողութիւնը: Դի տեղ Թ անցնելով. այս քլորուկը եթէ ջուրի ներգործութեան տակ դնենք նախնական թթուն կը զատուի եւ յառաջ կուգայ քլորական թթու: Թթուներու մէջ ջրածինին տեղ մետաղի մը անցնիլը երկու կերպ տեղի կ'ունենայ. ուղղակի և կամ կըրկնակ տարբազադրութեամբ: 1. Ջրածին պատրաստելու փորձին մէջ զէնկի ծծմբատի կազմութիւնը յառաջ կուգայ պարզապէս ծծմբական թթունին պարունակած ջրածինին տեղ զէնկը բռնելովը

$$\text{Մթ}^1\text{Ջ}^2 + \text{Ջ} = \text{Մթ}^1\text{Ջ} + \text{Ջ}^2$$

Ծծմբական Թթու Զէնկ = Զէնկի ծծմբատ Զրածին

2. Մինչդեռ կրկնակ տարբազադրութիւն մը յառաջ կուգայ երբ ծծմբական թթուն ու կալիոնը միանան

$$\text{Մթ}^1\text{Ջ}^2 + 2\text{ԿլթՋ} = \text{Մթ}^1\text{Կլ}^2 + 2\text{Ջ}^2$$

Ծծմբական Թթու Կալիոն Կալիի ծծմբատ Զուր

Նոյնպէս է նաեւ կալիի բնածխատի կազմութիւնը

$$\text{Բնթ}^3\text{Ջ}^2 + 2\text{ԿլթՋ} = \text{Բնթ}^3\text{Կլ}^2 + 2\text{Ջ}^2$$

Բնածխական Թթու Կալիոն Կալիի բնածխատ Զուր

Acide

Կալիի ծծմբատ ու բնածխատ՝ այս երկու աղերուն կազմութիւնը համանման կ'երեւի մեզ, սակայն փորձը կատարելու ժամանակ պիտի տեսնենք որ առաջին փորձին մէջ քանի մը պատիկ աւելի ջերմութիւն կ'արտադրուի քան երկրորդին մէջ, ասոր համար կ'ըսեն թէ ծծմբական թթուն զօրաւոր քրու է, իսկ բնածխական թթուն՝ քերեւ։ Բնածխական թթուի աղերուն մէջը՝ ծծմբական թթուն կրնայ զայն վանել եւ անոր տեղն ինք անցնիլ։

$\text{C}^{42}\text{O}^2 + \text{H}^{35}\text{O}^2 = \text{C}^{44}\text{O}^2 + \text{H}^{37}\text{O}^2 + \text{O}^2$
 Ծծմբակ. թթու Կալիի բնածխատ Կալիի ծծմբատ Ածխ. կազ ջուր

Զօրաւոր ու թեթեւ թթուներու բաժանումին առթիւ լրացատրեցինք թէ ինչպէս անոնք կ'աղգեն լուազեղի գոյնին վրայ։ Այս կապոյտ գոյնը կազմող նիւթը՝ կիրի լիթմաթը՝ կապոյտ աղ մըն է, թեթեւ ու կարմիր գոյնով թթուէ մը լիթմական թթուէն յառաջ եկած։ Եթէ այս աղին վրայ լիթմական թթուէն աւելի զօրաւոր թթու մը հակազդել տան՝ անոր տեղը կ'անցնի եւ լիթմական թթուն ազատ կ'արձակուի. ասկէ յառաջ կուգայ կարմիր գոյնը՝ եթէ աղկազմ մը աւելցնենք վրան, այս թթուն համապատասխան աղ մը յառաջ կ'ըրեող կապոյտ գոյնով։ Ասկէ կը հասկըցուի որ թեթեւ թթուները ազդեցութիւն մը չեն ըներ այս աղին վրայ երբ անոր թթուն իրենցմէ աւելի զօրաւոր է. ասոր համար աւելի թեթեւ թթուներէ կազմուած աղեր փնտռած են, զանազանել կարենալու համար թթուները աղկաղմբէն ելիանքիքի լուծոյթը դեղին է, վրան թթու մը լեցուելուն պէս կը կարմրենայ, սակայն աղկաղմբերու ներկայութեան բնաւ գոյն չփոխեր։ Ֆրալիքի լուծոյթը անգոյն է. աղկաղմբի մը ներկայութեան մանիշակագոյնի կը փոխուի բայց թթուները չեն կրնար անոր գոյնը փոխել։ Այս երկու մարմինները լուազեղի կապոյտէն շատ աւելի ճշգրիտ կը զանազանեն թթուները՝ աղկաղմբէնէն։ — Թթուներու պարունակած ջրածնի հիւլէներու մէկ մասին տեղ մետաղ մը կրնայ անցնիլ. ասոնք են աղկաղմբական հիւլէները. իսկ միւսները՝ որոնք սոյն փոփոխութեան տեղի չեն տար. քացախական թթուին՝ $\text{H}^2 \text{O}^2$ մէջ մէկ հիւլէ ջրածնի տեղ՝ ո՛ր եւ է մետաղ մը կրնայ անցնիլ. ինչպէս կալին եւ յառաջ բերել կալիի քացախատը $\text{H}^2 \text{O}^2 \text{H}^2$, իսկ փնացեալ երկու հիւլէները չեզոք կը մնան։ Թթուի մը մէկ մասնիկին պարունակած աղկաղմբական ջրածնի հիւլէներու քանակութիւնը կ'որոշէ այդ թթուին աղկաղմբական զօրութիւնը։ Թթու մը միաղկաղմբական, երկաղկաղմբական, եռաղկաղմբական եւայլն է կ'ըսուի երբ մետաղի մը հետ փոխանցելի մէկ, երկու կամ երեք հիւլէ ջրածնի կը պարունակէ։ Միաղկաղմբական թթու մը՝ աղերու մէկ կարգ մը միայն կրնայ յառաջ բերել, եթէ մետաղը միարժէք է, տարազը՝ կ'ըլլայ Ա Մ՝. ուր Ա կը ներկայացնէ թթուական արմատականը եւ Մ՝ միարժէք մետաղը որ ԱՋ թթուին մէջէն Ջ ջրածնին տեղն անցած է, բորական թթուն աղերու շարք մը միայն կրնայ տալ, կալիի բորականատ K^{35}O^2 , նատրիոնի բորականատ Na^{35}O^2 . Եթէ մետաղը երկարժէք է. թթուէն երկու մասնիկ կ'առնեն եւ վերի տարազը կ'ըլլայ $(\text{U}^2)\text{O}^2$. Կիրի բորականատը կը գրուի $(\text{H}^{35})^2\text{O}^2$ ։

Acier

Թթու մը երկաղկազմական կ'ըսուի երբ մետաղով փոխանցելի երկու հիւլէ ջրածին կը պարունակէ, ինչպէս ծծմբական թթուն ՄթՊ²։ այս թթուները երկու կարգի աղերու ծնունդ կուտան։ ծծմբական թթուն կը կազմէ կալիի թթու ծծմբատը ՄթՊ² և չեզոք ծծմբատը ՋթՊ²։ այս թթուները երկարժէք մետաղներու հետ միանալով մէկ աղ մը միայն կը կազմեն, ինչպէս կիրի ծծմբատը ՄթՊ²։ Եռաղկազմական կ'ըսեն թթուի մը համար, երբ անոր փոխանցելի ջրածնի հիւլէներու թիւը երեքի կը հասնի, ինչպէս է լուսածնական թթուն ԼթՊ³ որ միարժէք մետաղի մը հետ միանալով աղի երեք դասակարգերու ծնունդ կուտայ։ — Թթուներու կարգ մը կայ որոնք միմիայն բնածուխ, թըթունածին և ջրածին կը պարունակեն, ասոնք են գործարանաւոր քրուներ, յառաջ կուգան ալքալիներու ոքսիտացումէն։ — Թթուներու ձգած բիծերը կամ արատները կերպասներու վրայ, եթէ նոր է ու հիստուածքը չէ այրած՝ մաքրելու համար զանոնք կը բռնեն ցնդական ալքալի պարունակող ամանի մը վրայ և կամ ալքալի լուծուած ջուրով կը լուան զայն, իսկ եթէ եղած արատը հին է կամ կտաւը այրած՝ ներկայարին զրկելէ ուրիշ ճար չկայ։

Acier, Պողպատ. — Երկաթին պարունակած քիչ քանակութեամբ օտար նիւթերը և կարգ մը բնագիտական գործողութիւնները որոնց կ'ենթարկենք զայն, մեծապէս կը փոփոխեն անոր մեքենական յատկութիւնները։ Կրնանք երեք տեսակի բաժնել զայն՝ պարզ երկաթը, պողպատը և թափփոն։ Երկաթն ու պողպատը շատ դիւրութեամբ կարելի է զանազանել թափփոնէ, անոնք աւելի քիչ բնածուխ և օտար նիւթեր կը պարունակեն ու կուտան ինքն։ Իսկ պողպատին ու երկաթին միջև տարբերութիւն մը դնելը աւելի դժուարին է։ Ֆիլատելֆիոյ մէջ յատուկ միջազգային յանձնաժողով մը կազմուած է զանազան տեսակ երկաթներն ու պողպատները իրարմէ որոշելու համար։ առուտուրի մէջ միազօղ երկաթ անունը կուտան ամէն տեսակ երկաթեայ զանգուածներու որոնք բաղկացած են ո՛ր եւ է միջոցաւ, ի բաց առեալ հալեցնելու գործողութիւնը, իրար միացած կտորներէ։ ասոնք միտելով չեն կարծրանար։ Միազօղ պողպատը ասոր նման է, առանց հալումի գործողութեան կ'ստացուի և միտելով կը կարծրանայ։ այս է բնական պողպատը։ Հալածոյ երկաթ կ'ըսեն բոլոր երկաթեղէններուն որոնք յառաջ եկած են ջերմութեամբ հալեցնելու գործադրութեան ենթարկուելով և միտելով չեն կարծրանար։ վերջապէս ասոր նման ամէն երկաթեղէն որ հալելով յառաջ եկած է և միտելով կը կարծրանայ՝ հալածոյ պողպատ կ'ըսուի։ Պողպատը եթէ բաւական բարձր բարեխառնութեան մը հասցնելով (800 աստիճանի մօտ) եթէ մէկէն ի մէկ պաղեցնենք (միտած պողպատ) տարբեր յատկութիւններ կ'ունենայ քան եթէ այդ աստիճանին հասցնելէ ետքը թողունք որ կամաց կամաց պաղի (կրկնեփ պողպատ)։ Պողպատին մէջ գտնուած օտար մարմիններէն ամէնէն կարեւորը բնածուխն է, ան է որ պողպատին կուտայ իր կարծ-

ԴԷՊ Ի ԼՈՒՍԻՆ

ՀԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆ

(Շարունակում ընդ թիւն եւ վերջ)

Հօրեղբորորդիս տառնէ մը ի վեր մայրաքաղաքն առաջնորդող ընդարձակ ճամբու մը կը հետեւէր։ Այս ճամբան մեծ աղամանդներով սալայատակուած եւ պորփիւր քարափով մը եզերուած էր։ մինչդեռ ուրիշ ճամբաները որուն կցուած էին, պարզապէս մարգարիտի հաստ խիճերով ծածկուած էին։ Ճամբուն միակ անպատեհութիւնը հանրային կառքերու թաւալումէն բարձրացած ոսկեփոշին էր։ տեսարանին միւս մասերը հաճոյալի էին։ Լարութին կը գարմանար ճակնդեղներուն վրայ, որոնց բարձրութիւնը 165 ոտքը կ'անցնէր, ցորեններուն վրայ որոնց հասկերուն բարձրութիւնը մեր մայր եկեղեցիներ կ'անցնէր։ Բանջարեղէնները ծաղիկները եւ պտուղները նոյն համեմատութեամբ էին։

Այսու հանդերձ, շատ մը բնակիչներ երբ հօրեղբորորդիս տեսան, օտար թերեւս կատաղի անասուն մը կարծելով, մեծ աղմուկ հանեցին։ Երբ քաղքին մօտեցաւ, խորամանկութեամբ բռնեցին եւ զանիկա յաղթական կերպով կենդանաբանական պարտէզը տարին։ Կ'երեւայ թէ Լուսնի մէջ ալ կը սիրեն ամէն տեսակ կենդանիներէ հաւաքածոյ ունենալ, սպասուհիներն ու պըզտիկները զուարճացնելու եւ գիտուններուն զանոնք ուսումնասիրելու միջոց հայթայթելու համար։

Լարութին 48 ժամերէ ի վեր բան մը դրած չէր բերանը, շատ անօթի էր իր ոսկիէ վանդակին մէջ։ բարեբաղդաբար դիտելու համար եկող սպասուհիներէն, զինուորներէն եւ աղոցմէն շատերը շաքարեղէններ կը նետէին, որոնք կը բաղկանային սխտորով եփած գետնախնձորներէ սառեցուցած եւ վրան լեցուած լուբիաներէ, որուն վրայ փոխանակ շաքարի մանանիխ ցանած էին։ Լուսնեցիները վանդակին տակէն կ'երկնցնէին չնաչափարհիկ ու տեսները, եւ պէտք էր տեսնել թէ ի՞նչ սարսափով իրենց ձեռքերը ետ կը քաշէին, երբ, հօրեղբորորդիս զանոնք ընդունելու համար ձեռք կը կարկառէր։

Շուտով հորեղբորորդիս գլխաւորին բաւը տարուեցաւ, ուր իր սիրելի կապկութիւններն բրաւ: Հոն գինք զարմացնող շատ բազեր տեսաւ: Բարձր դասակարգի Լուսնեցիներուն, զարդերն ու զարդարանքներն բոլորն ալ երկաթ էին: Նոյնպէս իրենց կիներուն ասպարանջանները, մատնիները եւ մանեակներն ալ երկաթէ էին: Մեր փողոցներուն սալաշատակման համար գործածուած գայլաթաղը՝ իր մեծութեամբն եւ քիչ փայլունութեամբը գլխաւորին կուրծքը կը զարդարէր: Պատճառն այն է որ հոն այս քարերը հազուագիւտ, հետեւաբար թանկագին էին, մինչդեռ արծաթը, ազամանդը, սուտակը եւ մարգարիտը գոհարեղէններ ըլլալու համար շատ հասարակ րաներ էին:

Երբոր Լուսնի մէջ կ'անձրեւէ, առաջին տեսակէն գինի կ'անձրեւէ, մեր պարզ ջուրը հոն շատ կը փնտռուի եւ բաւական սուղ է, շատ մը գինետուններու մէջ մաքուր եւ թարմ ջուրէ զատ ուրիշ բան չի ծախուիր, նոյն իսկ կեղծ ջուրի գաղտագողի գործարաններ կան, երկրի վրայ գինիի եւ օղիի համար եղածին պէս:

Հորեղբորորդիս՝ Լուսնի բնակիչները շատ անկեղծ ու խելացի գտաւ, տեսաւ որ իրենց յարաբերութիւններուն մէջ երբեք սըտախօսութիւն չէին ըներ: Կիներն համեստ, լռակեաց եւ երբեք գէշ չէին խօսեր իրենց եւ դրացիներուն մասին:

Անցորդներն իրարու հանդէպ մեծ քաղաքավարութիւն կը յայտնէին, ոչ զիրար կը հրմշտկէին, ոչ իր կռուէին եւ ոչ կը ծեծկուէին: Զիաւորները եւ կառապանները մարդավայել կերպով կը վարէին իրենց գրաստները, հանդէպ անասուններու եղած անգրթութիւնները միշտ գէշ սրտի մը նշանները կը նկատուէին: Փողոցներուն մէջ երբեք մուրացկան չի կար, ամէն մարդու համար աշխատութիւն եւ գործ կար: Թափառական, ծոյլ ու անպիտան մարդիկը խտրութեամբ կը պատժուէին: Դատարաններ շատ քիչ կը գտնուէին: Փաստաբանները շատ քիչ գործ կ'ունենային: Լուսնի բնակիչները լռակացութեան տիպարներ էին, իրենց բերնէն բառ մը խլելու համար, շատ անգամ հարցնելու է: Դատերուն մեծամասնութիւնը պարտապան բանւորներուն էր, իրենց պահանջատէրերուն դէմ բացուած, անոր համար որ իրենց առնելիքը չէին ուզեր առնել, և որոնք կը բռնադատուէին որ ընդունէին իրենց պահանջը եղող գումարը:

Արտակարգ սքանչելիք մըն էր քաղաքը: Տուները յախճապա կիւէ, պորփիւրէ, մարմարիոնէ եւ նոյն իսկ տարբեր տեսակ թանկագին քարերէ շինուած էին: Պատշգամները, փականքները, ծխնիները, մուրճերը եւ տանիքներն ոսկիէ էին, որոնք արեւին տակ չլացուցիչ տեսարան մը կը ներկայացնէին:

Անուշեղէններու, պիստակներու եւ շաքարեղէններու վրայէն չքեղ գետ մը քաղքին մէջէն օձապտոյա կ'ընթանայ, որուն հիւթեղ ալիքները կը ճեղքեն պաքսիմատի եւ հրուշակի նաւակներու հիանալի խումբ մը՝ շաքարէ կայմերով եւ թիւերով։ Վանաշաքարէ կամարներով հարիւրէ աւելի կամուրջներ գետին մէկ եզերքէն միւսը կ'երկնան։ Գալով քարափներուն անոնք պարզապէս շոքովաթէ՝ շինուած եւ վարդի անուշահոտ բլիթներով քարայատակուած։ Հակառակ այս բոլոր գեղեցկութիւններուն, հօրեղբորորդիս դառնապէս կը ցաւէր այս երկրին՝ ուր ինք ծնած էր եւ ուր տակաւին ծնողքն ու բարեկամները կը գտնուէին, եւ ինքնիրեն կ'որոշէր երբեք չի փախցնել առիթը եթէ երբեք հոն վերադառնալու պատեհութիւնը ունենար։ Վերջապէս այս պատեհութիւնը ներկայացաւ։

Շուտով Լուսինին մէջ լուր մը տարածուեցաւ թէ երկրէն նոր եւ տարօրինակ կենդանի ինկած էր. ամէն կողմերէն զայն տեսնելու փութացին եւ այս բազմութիւն մայրաքաղաքին շքեղութիւնն ալ աւելի աւելցուց։ Մօտակայ երկրին գլխաւորը նախանձէն՝ կ'առարկէր թէ օդապարիկն իր երկրին վրայ ինկած էր, հետեւաբար կենդանին իրեն կը վերաբերէր. բայց կանխաւ Լարութիւնին տիրացող գլխաւորը չէր ուզեր անկէ բաժնուիլ։ Այս մեծ վէճին արդիւնքը կռիւի մը յանգեցաւ, ադամանդի լեւան ստորտը պատերազմ մը տեղի ունեցաւ, որուն վրայ օդապարիկը կեցած էր։ Մինչ երկու բանակները կը կռուէին, հօրեղբորորդիս գլխուն վրայ իր շատ սիրելի երկիրը տեսնելով ծածուկ մը կծիկը դրաւ. եկած ճամբան գիտէր, շուտ մը անկէ դէպի վեր ուղղուեցաւ. անմիջապէս լեւան գադաթը հասաւ, ուր գտաւ օդապարիկը։ Շուտով նաւակին պարկը բացաւ, ուր գտաւ օդապարիկը ուռեցնելու համար պէտք եղածները. քիչ ժամանակի մէջ անոր գեղեցիկ իլորութիւն մը տալէ ետքը մէջը մտաւ եւ ահաւասիկ օդապարիկը վեհօրէն միջոցին մէջ բարձրացաւ։

Լարութիւն տեսաւ երկու բանակներուն տակաւին կռուիլը եւ քիչ յետոյ տեսողութենէ կորսնցուց, եւ իր առաջին ճամբորդութեան բոլոր երեւոյթներէն ներհակ կերպով անցաւ եւ կամաց մը Բարիգի Շան-տը-Մարսը իջաւ, ուրկէ 129 օր առաջ այնքան ձախող մեկնում մը ըրած էր. իր ուրախութիւնը չափ չուներ, որովհետեւ ան լուսինէն սուտակի, գլուխտի, ադամանդի եւ ուրիշ քարերու մեծկակ հարստութիւն մը կը բերէր։ Դժբաղդաբար իր քովի մարդիկը այս անհուն բաղդը ծածկեցին, զայն ստախօս, խելակորոյս անուանեցին. իր արկածներու պատմութեան չհաւատացին եւ իրենց այս ու այն գէշ վարմունքովը զայն յուսահա-

տեցնելէ ետքը Շարանթօնի հիւանդանոցին մէջ փակել տուին։ Այսօր ինքը հոն կը բնակի և անձամբ իր պատմութիւնը ինծի պատմեց այցելութեան մը առթիւ։

Թարգմ. ԱՍՍՏՈՒՐ ՃԱՆԻԿԵԱՆ

Աշակ. Իրրանոսեան վարժ.

ՓՈԹՈՐԻԿՆԵՐՈՒ ՈԳԻՆ

Անձանօթ երկիրները թողելնէս ի վեր, արեւը հինգ անգամ լուսաւորած էր տիեզերքը։ Գիշերը լուին իր լուսազարդ կառքը կը պտտցնէր. մեր նաւերը հանգաւորիկ ծովը կը ճեղքէին ու մեր զինուորները անոնց ցռուկին վրայ նստած կը հսկէին։ Յանկարծ մութ ամպ մը երկինքը պատեց եւ մեր սրտերուն մէջ ահ ու դող մը ձգեց։

Սաւարին ծովը՝ հեռուէն ժայռերու վրայ խորտակուող ալիքներու աղմուկին նման, աղմուկ մը լսել կուտար։ « Հօգօր Աստուած, կը պօռայի, այս ի՛նչ մեծ վտանգի մասնեցիր մեզի։ Ի՞նչ ահարկու հրաշքներ պիտի մատուցանեն կիման եւ այս ծովը »։

Հազիւ թէ խօսքս կը լսնցնէի, հազարն ու սոսկալի ուրուական մը մեր դէմն ելաւ, սպառնալից կեցուածք մը, վայրագ ու գունատ դէմք մը ունէր ան. իր թանձր մօրուքը ցետոտ, իր մազերը հողով եւ խիճով լեցուած, իր շրթունքը սեւ եւ ափոսները կապարագոյն էին։ Իր սեւ յօնքերուն տակ կայծակնացայտ աչքերը կը դառնային։ Իր հասակը բարձրութեամբ կը հաւասարէր այն հրաշալի վիթխարի մարդուն, որ հին ռատենները Հսողոսի պերճանքը եւ տիեզերքի զարմացումն էր։

Կը խօսի. իր՝ ահեղ ձայնը կարծես Նեպտունի անդունդներէն կ'ելլէր։ Զայն տեսնելով. իր պակասութիւնները դիտելով՝ մեր մազերը քստմնիլ սկսան, սարսափ մը մեզ պատեց ու սառեցուց։

« Ո՛ր մահկանացուներ, պօռաց, բնաւ պատնէշ մը չի կա՞յ որ ձեզ կասեցնէ։ Աննուած ուղեւորներ, անխոնջ նաւաստիներ, կը համարձակի՞ք այս ընդարձակ ծովերուն մէջ մտնել, որուն մշտնջենական պահապանն եմ, այս նուիրական ծովերուն մէջ. ուր օտար նաւ մը չիկրցաւ զանոնք պղծել, եւ որուն մուտքը նոյն իսկ ինծի արգելուած է։

« Բնութենէն կը քաղէք այն գաղտնիքը, որ ո՛չ գիտութիւնը, ո՛չ հանճարը դեռ չէին կրցած յափշտակել։

« Է՛հ, լաւ, յանդուգն՝ մահկանացուներ, սորվեցէ՛ք այն աղէտքները՝ որոնք այս մրկայոյդ ծովեզրին վրայ եւ հեռու երկիրներու մէջ, — ուր ձեր կիրքերը պիտի տարածէք — ձեզ կը սպասեն։

« Վա՛յ այն սրբապիղծ նաւուն , որ համարձակի ձեր հետքերուն վրայ խոյանալ : Իր դէմ պիտի զայրագնիմ : հովերն ու փոթորիկները պիտի զինեմ : Վա՛յ այն նաւատորմիդին՝ որ ձերինէն յետոյ՝ իմ զօրութեանս դէմ խիզախելու գոյ : Հազիւ թէ իմ ծովերուս վրայ երեւայ , պիտի դարնուի եւ ալիքներուն մէջ պիտի խորասուզուի : »

« Իրեն հետ պիտի ոչնչանա՛յ այն ամպարիշա նաւարկուն , որ իր թափառական ընթացքին մէջ նշմարէ իմ անբռնաբարարելի բնակութիւնս , եւ ձեզի իմ էութիւնս երեւան հանէ : Այս սոսկալի պատուհասը մի միայն ապագային պատրաստուող դժբաղդութեանց նախաշաւիղը պիտի ըլլայ : Եթէ՝ ճակատագիրներու գիրքը կարդալ գիտնայի , իմէն տարի ձեզի նոր աղէտներ պիտի բերէի , եւ մահը ձեր վիշտերէն ամենափոքրը պիտի ըլլար : »

Այդ ահարկու գուշակութիւնները կը շարունակէր դեռ , երբ ըսի իրեն . « Ո՞վ ես դուն , հրէ՛չ , ի՞նչ չար գուշակութիւններ քու բերնէդ կ'ելլեն » :

Ժանտաղէմ հսկան չարաշուք ականարկ մը նետեց իմ վրաս , իր սոսկալի շրթունքները ճիգով մը բացուելով , անոնց մէջէն ահեղ ձայն մը խոյս տուաւ : Վերջապէս , սուր եւ զայրոյթի ձայնով մը պատասխանեց .

« Ես փոթորիկներու ոգին եմ , կը սիրեմ այս ընդարձակ սարաւանդը զոր Պտղոմէոսներ , Ստրաբոններ , Պլինիոսներ , ձեր գիտուններէն եւ ոչ մէկը զայն չի ճանչցան : Կը վերջացնեմ այս հասարակածային երկիրն , այս Հակարջային բեւեռին նայող գլուխէն , որ մինչեւ այսօր մահկանացուներու աչքէն սքողուած էր : »

« Իմ չորցած միսէս , իմ ժայռի փոխարկուած ոսկորներէս , աստուածները , անողո՛ք աստուածները այս ծովերուն վրայ տիրապետող ընդարձակ սարաւանդը կազմեցին եւ իմ տանջանքներս աճեցնելու , իմ յաւս արհամարհելու համար Դէդիս իր խոնաւ գօտիով ամէն օր զիս սեղմել կուգայ : »

Այս խոսքերուն վրայ , արտասուքի հեղեղ մը հոսեցուց եւ անհետացաւ : Իրմով նուազեցաւ մթին ամպը , եւ կարծես ծովը երկար հեծեծանք մը քաշեց : Զեռքերս երկինք կը բարձրացնէի . ճամբորդներու հաւատարիմ առաջնորդներ եղող երկնային ոգիներէն օգնութիւն կը հայցէի , անոնցմէ կը խնդրէի մեզի ամէն վտանգներէ հեռացնել , որոնցմով անգութ Ատամաստոր մեր ապագան կ'սպառնար :

Թարգմ. ՀԻՄԷՆ

Օրթաքէօյ

ԳԱՄՕԷՆՍ

Տպարանէս լոյս տեսաւ. Զ. էֆ. Թորոնեանի յօրինած «Դպրոցի Գիրքը», ՄԱՆԿԱՊԱՐՏԷՋԻ ՀԱՄԱՐ. — Ա. մաս. Այբենարան ու նախադասութիւնք և Բ. մաս Ընթերցումներ:

Գործը թէեւ փոքրիկ, բայց իրապէս մանկավարժական է. մախուր տպագրութիւն, ընտիր բուղթ եւ գեղեցիկ պատկերներ:

Ստորեւ դրուած ազդին վրայ մեր ընթերցողներուն ուշադրութիւնը կը հրաւիրենք:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹԻՒՆՔ ԿԵԴՐ. ԴՐԱՏԱՆ (Զ. ԹՈՐՈՍԵԱՆ)

Պոլիս, Չապմագնիւրար Եօպուտու, քիւ 64

ԸՆԹԵՐԿՈՒՄ ԸՆԹԵՐԿՈՒՄ ԸՆԹԵՐԿՈՒՄ

Դպրոցի գիրք՝ Մանկապարտէզի ու նախակրթարաններու համար

Ա. ՄԱՍ. — Այբենարան ու պարզ նախադասութիւններ, ուր այբ-բենի ուսուցման դժուարութիւնն յարգուած է՝ մանկավարժական պարզ եւ հասկնալի հրահանգներով: Տպագրուած ընտիր թղթի վրայ ու զարդարուած տղաքը զրօսցնող նո՛ր պատկերներով. էջ 32, գին 20 փր. 100ը 25 եւ 50ը 15 շրջ:

Բ. ՄԱՍ. — Պարզ եւ դիւրահասկնալի ընթերցումներ՝ զարդարուած հետաքրքրական ու նոր պատկերներով: Ստոր ընդարձակ յառաջարանին մէջ Այբ-բենի ուսուցման ամենազիւրին եղանակը իր բոլոր մանրամասնութեամբ պարզուած է: Տպագր. ընտիր թղթի վրայ. էջ 63: Գին 2 շրջ. 100ը 100 եւ 50ը 62½ շրջ:

Նոյն երկու մասը մէկտեղ կազմուած էջ 95. գին 100 փր. և 100ը 125 շրջ:

ԴՊՐՈՑԻ ԳԻՐՔԸ, նախակրթարանի համար, հրատարակուած հն՝ (տարրական ընթացք)

Նախապատրաստական տարի պատկեր, էջ 128 գին 3 շրջ.

Առաջին » » » 128 » 4 »

Երկրորդ » » » 156 » 4 »

Իսկ չորրորդ մասը ընդարձակ ու չահեկան պատրուակութեամբ արդէն մամլոյ տակ է: Մանկապարտէզի բաժինէն անխտիր ամէն դպրոցի մէջ մէկ օրինակ ձրի կը շրջէ գրատունը՝ ի փոխարէն 30 փրջ. թղթատարական փուլի:

Յանձնարարութիւնները պէտք է ուղղակի յօրինողին հասցէին շրջել, առանց միջնորդի, թէ՛ մեծագոյն գեղջը ստանալու և թէ՛ բուն յանձնարարութիւնը ստանալու:


Վ. Յ. Յակոբեան Անգ.-Հայ բառգիրքը կը գտնուի մի՛միայն սոյն գրատունը, գին փոստի ծախքով 85 շրջ. ինչպէս նաեւ Եղիա

Տէմիրճիպաշեանի Հայ-գաղ. բառգիրքը, որ իր վերջն ունի յատուկ անուանց բառգրքուկ մըն ալ. գին 15 դրչ. Զեղչ գոհացուցիչ. Ամէն վճարում կսնխիկ է եւ Պոլսոյ մէջ վճարելի:

Վերոյիշեալ գիրքերը նոյնութեամբ եւ նոյն գեղչով տպարանէս ալ կրնան ստանալ փոխարժէքը կանխիկ ղրկելով:



Հանրագիտակի **Յրդ** քիւին մեջ արտակարգ կենդանիութեան հարցումին լուծումը:



Սոյն 13 կտորներն մէկգումբով քով բերելով ճիշդ փառակութիւնը մը շինել:

ԵՂՆԻԿԻ ՈՐՍՈՐԴՈՒԹԻՒՆ

Աշակերտներէն մէկն, այսինքն ամէնէն լաւ վազողն, եղնիկի դէքը կը կտտարէ. իսկ մնացեալ աշակերտներն որսորդներ ու շուներ կը լինին:

Սոյն դերերը աշակերտներուն մէջ բաժնուելէ ետքը, պարտէզին մէջ չըջանալ մը կը գծեն, որուն բոլորտիքը կը լեցնեն զանազան խոշնդոտներ, օրինակի համար, ծառի կոճղեր, ճիւղեր, քարի կտորներ, վանդակներ եւայլն:

Որսորդները փողերու ձայնին նման աղաղակներ կ'արձակեն, կամ եթէ ունին՝ փողով մը նշան կուտան: Խաղը կ'սկսի: Եղնիկը գտնուած տեղէն կը մեկնի, խոշնդոտներէն կ'անցնի եւ ամէն արգելքներէն ցատկելով կ'արշաւէ:

Որսորդները իրենց շուներն եղնիկին վրայ կը վազցնեն, մինչդեռ իրենք ծանր ծանր յաւաջ կ'երթան:

Շունները եղնիկին վրայ յարձակելու եւ զայն բռնելու իրաւունք չունին. իրենց պաշտօնն է միայն զայն հալածել եւ անցընել այն տեղերէն՝ որոնցմէ անցած է եղնիկն: Ամէն շուն որ եղնիկին կը դաչի, մեռեալ կը նկատուի եւ անմիջապէս դուրս կ'ելլէ խաղէն. այսպէս շուները կը հալածեն եղնիկը եւ կը ջանան անոր ճամբան գոցել:

Երբ որսորդներն յարմար առիթը գտնեն, խոշնդոտներէն կ'անցնին եւ կուգան եղնիկը պաշարել: Եղնիկին միակ ապաւէն կը մնայ մէջտեղի չըջանալին մէջ մտնել: Եթէ յաջողի առանց դրուած խոշնդոտները մէկ կողմ ընելու եւ որսորդներէն բռնուելու, խաղը վաստկող կը նկատուի եւ խաղը կը վերջանայ:

Նորէն կրնայ կրկնուիլ ու եղնիկին դերը ուրիշ տղայ մը իր վրայ կ'առնէ:

Ինչպէս ըսինք, թէ՛ եղնիկն եւ թէ՛ որսորդներն ու շուները դրուած խոշնդոտներն տեղէն չպիտի վերցնեն անցնելու ատեն:

the city of London, from the first settlement of the
 Britons, to the present time. The first part of the
 history is divided into three periods, the first of which
 is the period of the Britons, the second of the Saxons,
 and the third of the Normans. The second part of the
 history is divided into three periods, the first of which
 is the period of the Saxons, the second of the
 Normans, and the third of the English. The third
 part of the history is divided into three periods, the
 first of which is the period of the English, the
 second of the French, and the third of the
 Spaniards. The fourth part of the history is
 divided into three periods, the first of which is
 the period of the Spaniards, the second of the
 Portuguese, and the third of the Dutch.

Geography of London

THE CITY OF LONDON

The city of London is situated on the banks of the
 River Thames, and is the largest city in England.
 It is divided into two parts, the city proper, and
 the suburbs. The city proper is divided into
 four wards, the first of which is the ward of
 St. Martin, the second of St. Andrew, the third
 of St. Dunstons, and the fourth of St. Mary
 Abchurch. The suburbs are divided into three
 parts, the first of which is the part of the
 city which is situated to the north of the city
 proper, the second of the part which is situated
 to the south of the city proper, and the third
 of the part which is situated to the east of the
 city proper. The city of London is the largest
 city in England, and is the most important
 city in the world.

ԿԱՐԵԻՈՐ ԶԵԿՈՅՑ ՄԸ

Հանրագիտակ երկու տարիէ ի վեր կանոնաւորաբար հրատարակուելով, կարծենք թէ, բաւական վստահութիւն ներշնչեց իր յարատեւութեան մասին, սակայն զարմանալի է տեսնել որ երբ մենք առանց վերապահութեան վստահութիւն կ'ընենք առաջին անգամ ներկայացնող բաժանորդներուն և քիչ ետք բաժնեգիրք գանձելու խոստումը ընդունելով թերթ կը ղրկենք, տարեշրջանը աւարտելէն տակաւին երկու ամիս ետքն ալ չենք ստանար կարգացուած թերթերու դրամը: Հիմա որ ընթերցող հասարակութեան ճանջուցինք մեր ձեռնարկին լրջութիւնն ու յարատեւութիւնը, որոշած ենք ապառիկի դրութիւնը վերցնել, ուստի կը խնդրենք որ առանձին նամակով մը անձնապէս թերթ ուղղորդող բաժնեգիրն միասին ղրկեն, նոյնպէս մինչեւ հիմակ ուղղակի մեզ բաժանորդագրուողները դրամը մեզ հասցնեն առանց յապաղումի: Իսկ հոն ուր գործակալ ունինք, արդէն անոնք սկսած են բաժնեգիրները գանձել եւ չենք յուսար որ ո եւ է մերժումի հանդիպին քանի որ որոշ պայմանաժամէ մը ետքը ապառիկ թերթերը դադրեցնելու մտադրութիւն ունինք:

Տպագրիչ եւ Հրատարակիչ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ ԵՒ ՈՐԴԻ

ՊՈԼԻՍ, ՊԱՊԸ ԱԼԻ ԶԱՏՏԷՍԻ, ԹԻՒ 38. ԻԿՏԱՄ ԼՐԱԳՐԻ ԴԷՄ

Գաւառները գլխաւոր քաղաքներու մէջ ընդհանուր ներկայացուցիչներ ունի տպարանս, որոնց կրնան դիմել տպագրական ամէն տեսակ գործեր ունեցող, եւ կամ ո՛ր եւ է գրքի մը պէտք ունեցողները, եւ փոխարժէքն անոր վճարելով, կ'ընդունին տպարանքները: Այս միջոցով իրենք կ'ազատին թէ՛ աւելորդ ծախսերէ եւ թէ՛ նամակի եւ այլ կորուստներէ. եւ ինչ որ ամէնէն կարեւորն է, փոքր գումարներու փոխադրութեան համար յառաջ եկած դժուարութիւններէն ու հոգերէն կ'ազատին:

Գաւառներու մէջ Հանրագիտակի Մեծ Գործակալներու դիմողները կրնան սա առաւելութիւնն ալ վայելել որ, թէ՛ իրենց յանձնարարութիւնները կէտ առ կէտ կը կատարուին ամենակարճ ժամանակի մէջ եւ թէ միշտ վստահելի անձնաւորութիւն մը կ'ունենան իրենց մօտ պատասխանատու ամէն առթիւ: